Բ՚ի օր (12 Նոյ.) Տէր Գրիգոր Սուրբ Նիկողոսու՝ Սալնճախ կոչեցեալ՝ վախճանեցաւ։ Եւ սինհոդոսին վերջն այս լինի որ ասեն թէ Խէթիշէրիֆն թող գտանի. զի երկնչէր՝ գուցէ մի փախուցանեն զինքն, եւ շատ ջանային յայս, բայց ոչ ետուն ցոյց և ոչ հանեն յերեւան։

ԻԱ. ամսոյս Թադէոս[1]) վարդապետն առաջնորդն Սուրբ Կարապետի (եկն?)։

ԻԲ–ին զիշերին, որ Եշի լուսանայր, Ե–րդ ժամուն անկաւ կրակ ի Պալի փաշան եւ այրեալ հրդեհեաց զբազում տեղիս, զի անց ի Կէտիկ փաշան և տեարք քաղաքիս զբերանս շուկայիցն կտրեցին, զի ոչ մերձեալ ի շուկայն, այլ մինչ ի Ղարա Մուսթաֆին թուրպէն, զի յոյժ նոտոս էր և գկայծն աստ և անդ ձգէր, բայց զսաչախ չարսուլին եւ շուկայիցն և զառաջնն կտրեցին, և միջոցքն վառէր մինչ ի կէս օրս և մարէր։

ԻԳ Զշիս զտէֆտէրտարն փոխեցին և եդին զԽալիճի օղլին։ Եւ յաւուրքս ուղարկեցին առ Սէյտի Ահմէտն զի սիրելին էր՝ թէ ի խաղաղութեան վարիցէ և հաշտեցուսցէ ընդ քաղաքն Հալպայ և ընդ սոցայ. քանզի ի Հալապ բազում աւերս արար և զբազումս ջարդեաց և Ա. Բ մէհէլլէ առաւ, և փաշան Հալպայ փախեաւ և ամրացաւ ի բերդն, և նոքա նստեալ անդ պահէին թէ Ցորժամ առնենք զբերդն. եւ յետոյ ել խէթիշէրիֆ և ի մուհտուն ֆէթվայ և Դ Ե զափուճիպաշիք ի վերայ պէկլէրպէկոցն ուղարկեցին, զի նէֆիրամ անեն և ելանեն ի վերայ Սէյտ Ահմէտին։

Դշի (28 Նոյ.). Ղարամանցի հոռոմ մի կալեալ սուպաշուն ի պոռնկութիւն, եւ այր կնոջն տաճկին տաւաճի էր. տարան առ վէզիրն և փաշան ասացեալ ընդ ղազիքն թէ Ի թի դնենք զհոռոմն. եւ աղաղա-

1) Թաթէոս.